նայնիւ 370,640 հոգին դարձեալ մի խոշոր թանշան է: Մի այսքան բազմութիւն դեռ ամփոփ կերպով մնացել է հայրենական հողի վրայ: Թողեալ այդ, այս նահանգում կան եւ ուրիշ ազգութիւններ, որոնք մեզ վիճակակից են: Հրէաների, ասորիների, բոշաների եւ եզիդիների դրութիւնն աւելի վատ է, քան թէ հայերինը: Այս թշուառականները նոյնպէս մարդիկ են եւ մեզ նման մարդիկ, նրանց էլ պէտք է ազատութիւնը: Նրանք մեր բարի դրացիներն են եւ լաւ կենակիցներ են, նրանք պատրաստ են մեզ հետ գործելու...:

Հաշուելով ամբողջ Վանայ նահանգի քուրդ, թուրք եւ այլ մահմեդական ազգաբնակութիւնները, բոլոր հայերի կէս մասը հազիւ են կազմում. բայց նրանք տիրում են ամէնի վրայ, որովհետեւ զէնք ունեն, որովհետեւ կոպիտ եւ վայրենի ուժ ունեն: Այս երկրներն անունով միայն պատկանում են Տաճկաստանին, բայց իսկապէս տիրում են քրդերը: Այսպիսի բարբարոս ազգերի իշխանութեան ներքոյ, որոնք ամենեւին կրթութեան ընդունակ չեն, անհնար է մի ուրիշ, աւելի ընդունակ ազգութեան զարգանալ եւ մարդկային առաջադիմութեան ձգտել: Ահա՝ գլխաւոր պատճառը, թէ ինչո՞ւ այստեղ հայերն այսքան ետ են մնացել, եւ այսպէս խաւարի մէջ են ապրում: Կրկնում եմ, հայը ընդունակ է կրթութեան, որովհետեւ նա քրիստոնեայ է, որովհետեւ նա ունի հարուստ լեզու եւ ճոխ, բազմակողմանի գրականութիւն. նա ունի պատմական անցեալ: Մի քրէական յանցանք է դա մարդկութեան դէմ, թողնել մի այսպիսի ազգութիւն, որ բարոյապէս, մտաւորապէս եւ ֆիզիկապէս ոչնչանայ վայրենի քրդի ու թուրքի լծի տակ: Հայը եւ ասորին կարող են արեւելքում գիտութեան եւ կրօնի առաքեալներ լինել, ինչպէս եղել են առաջ, բայց նախ պէտք է նրանց ազատութիւն տալ:

Բայց երբեք օտարը մարդու համար չէ մտածում, քանի որ նա ինքն իր մասին անհոգ է: Ռամկական առածն ասում է՝ «մինչեւ տղան լաց չէ լինում, մայրը ծիծ չէ տալիս»: Բայց մենք այդ էլ փորձեցինք, շա՛տ լաց եղանք, շա՛տ աղաղակեցինք, բայց մեր ձայնը լսող չեղաւ...: Որովհետեւ ամբողջ աշխարհն իր փորի եւ քսակի համար է մտածում...: Որպէս Կ. Պոլսի «ամիրա» սեղանաւորը, իր անձնական շահերի պատճառով, միշտ խնկարկում է մի փտած եւ անկարգ կառավարութեան եւ միշտ նրա տեւողականութեան համար է աղօթում, — այնպէս էլ կան ամբողջ քրիստոնեայ-պետութիւններ, որոնք թուրքի հետ առեւտրական յարաբերութիւններ ունեն, եւ իրանց մասնաւոր շահերի պատճառով թողնում են, որ զանազան խեղճ ազգութիւններ թուրքի բռնակալութեան տակ ճնշոեն: — Նրանք վաճառականներ են, վաճառականի սրտից միշտ հեռու է մարդասիրական զգացմունքը...